Վարդանանց 18/1
+374 (11) 59-21-00
info@vardanants.am
www.vardanants.am

«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՓԲԸ (թողարկողի կոդ՝ 50057)

27.04.2026թ.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2025 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
   1.1 «Արինտերլև» ՓԲԸ. համառոտ ակնարկ
   1.2 2025 թ.-ի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
   2.1 «Արինտերլև» ՓԲԸ ռազմավարությունը
   2.2 Հիմնական ռազմավարական ձեռքբերումները 2025 թվականի ընթացքում

3. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
4. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 «Արինտերլև» ՓԲԸ. համառոտ ակնարկ

«Արինտերլև» ՓԲԸ-ը («Վարդանանց ՆԲԿ», «Վարդանանց» կամ «Ընկերություն») իր գործունեությունը սկսել է 2003 թվականին և ավելի քան 22 տարի իր ծառայություններն է մատուցում առողջապահական ոլորտում՝ տրամադրելով ամբուլատոր, իսկ 2024 թ.-ի դեկտեմբեր ամսից՝ նաև ստացիոնար բժշկական ծառայություններ:
Ամբուլատոր ծառայություններն ընդգրկում են բժշկական օգնության տարբեր ոլորտներ՝ հնարավորություն տալով հիվանդներին ստանալ փորձագիտական ախտորոշում և բուժում՝ առանց հոսպիտալացման անհրաժեշտության: Վարդանանցի ստացիոնարում համադրվել են ժամանակակից վիրաբուժական օգնությունը և անհատական ուշադրությունը, որպեսզի յուրաքանչյուր բուժառու ստանա ոչ միայն արդյունավետ բուժում, այլ նաև արագ վերականգնում:

1.2 2025 թ.-ի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը շարունակել է որակյալ ծառայությունների մատուցումը իր հաճախորդներին՝ ապահովելով սպասարկված հաճախորդների քանակի և որպես արդյունք՝ ընկերության հասույթի աննախադեպ աճ՝ նախորդ տարվա համեմատ: Ընկերության հասույթը 2025 թ.-ին կազմել է 5,660,019 հազար ՀՀ դրամ, որը գերազանցում է 2024 թվականի համարժեք ցուցանիշը 1,190,263 հազար ՀՀ դրամով կամ 27%-ով: Հասույթի նման աճի հիմքում ընկած են ինչպես բժշկական կենտրոնի կողմից սպասարկված հաճախորդների թվի աճը, այնպես էլ մատուցված ծառայությունների քանակի աճը: Մասնավորապես՝ 2025 թ.-ին Վարդանանց են այցելել 199,406 բուժառուներ և մատուցվել են 1,358,853 ծառայություններ: Նշված ցուցանիշները գերազանցում են 2025 թվականի համարժեք ցուցանիշները համապատասխանաբար 26%-ով և 27%-ով:

Ընկերության ակտիվները 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 5,753,371 հազար դրամ (2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,351,211 հազար դրամ):
Ընկերության պարտավորությունները 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 5,522,149 հազար դրամ (2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,505,013 հազար դրամ):
2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալը կազմել է 231 222 հազար դրամ (2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 846 198 հազար դրամ): Սեփական կապիտալի նվազումը պայմանավորված է Ընկերության արագ աճի փուլով և նոր մասնաճյուղերի գործարկմամբ, ինչի արդյունքում կատարված ներդրումների մաշվածությունը և գործառնական ծախսերի առաջանցիկ աճը հանգեցրել են տարվա ընթացքում կուտակված վնասի ավելացմանը:

Ընկերության դրամային տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը 2025 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1 030 000 հազար դրամ (ներառյալ հաշվեգրված արժեկտրոն 30 000 հազար ՀՀ դրամ), որոնք կազմում են փոխառու միջոցների 43%-ը: Պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի Ֆոնդային Բորսայում:
Սեփական կապիտալ և փոխառու միջոցներ հարաբերակցությունը կազմել է 10%: Ակնկալվում է, որ կապիտալ ծախսերի տեմպերի էական նվազումը և նոր մասնաճյուղերի աշխատանքի մեկնարկը կբարելավեն այս ցուցանիշը 2026-2027 թվականների ընթացքում:

Սկսած 2024 թվականի սկզբից և ամբողջ 2025 թվականի ընթացքում Ընկերությունը գտնվել է աճի ակտիվ փուլում՝ պայմանավորված ինչպես նոր մասնաճյուղերի բացմամբ, այնպես էլ մատուցվող ծառայությունների որակի բարելավմամբ և նոր ծառայությունների ավելացմամբ: Մասնավորապես, 2025 թվականի ընթացքում Ընկերությունը իր զարգացման ռազմավարական տարբեր ուղղություններում իրականացրել է 652,585 հազար ՀՀ դրամի կապիտալ ներդրումներ (2024 թվականի ընթացքում կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 1,875,047 ՀՀ դրամ):
Այս միջոցառումները, թեև Ընկերության որոշ ֆինանսական ցուցանիշների վրա նախատեսված և կառավարելի կերպով կարճաժամկետ ճնշում են գործադրում, հիմնարար և կայուն հիմքեր են ստեղծում Ընկերության որակական զարգացման նոր փուլի և ոլորտում խիստ մրցակցային պայմաններում առաջատար դիրքի ամրապնդման համար:

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 «Արինտերլև» ՓԲԸ ռազմավարությունը

2025 թվականի ընթացքում Ընկերությունը վերահաստատեց իր ներուժը՝ որպես հաճախորդների վստահությունը վայելող ժամանակակից և որակյալ բժշկական ծառայություններ մատուցող նորարական կենտրոն: Ընկերության հետագա աճի և ընդլայնման էական պոտենցիալը իրացնելու նպատակով Ընկերությունը անընդհատ և հետևողականորեն շարունակում է կատարելագործել աշխատանքի կազմակերպման գործող մեխանիզմները, կորպորատիվ կառավարման համակարգը, հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները և նոր բժշկական մեթոդների և մոտեցումների կիրառումը:

Ընկերության զարգացման ռազմավարությունը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները, որոնք նպատակ ունեն ընդլայնել ծառայությունների շրջանակը և բարելավել բժշկական սպասարկման որակը՝ համահունչ միջազգային չափանիշներին.

1. Ամբուլատորիա և պոլիկլինիկա
   - Մասնագիտացված ամբուլատոր ծառայությունների ընդլայնում,
   - Ընդունելության ժամանակացույցի օպտիմալացում,
   - Նորարարական տեխնոլոգիաների ներդրում հիվանդությունների վաղ հայտնաբերման համար:

2. **Ստացիոնար՝ էնդոսկոպիկ վիրաբուժություն**
   - Ցածր ինվազիվ վիրաբուժական մոտեցումների զարգացում,
   - Գերժամանակակից սարքավորումների ձեռքբերում,
   - Մասնագետների վերապատրաստում միջազգային պրակտիկայի հիման վրա:
3. **Ստացիոնար՝ անոթային և սրտաբանական ծառայություններ**
   - Անոթային հիվանդությունների ախտորոշման և բուժման առաջատար մեթոդների ներդրում,
   - Սրտաբանական միջամտությունների նորագույն տեխնոլոգիաների կիրառում,
   - Վերականգնողական ծրագրերի զարգացում:
4. **Ստացիոնար՝ գինեկոլոգիա**
   - Կանանց առողջության խնամքի ծրագրերի ընդլայնում,
   - Բարդ գինեկոլոգիական վիրահատությունների իրականացման կարողությունների զարգացում,
   - Հղիության և մայրության որակյալ բժշկական հսկողություն:
5. **Պլաստիկ վիրաբուժություն**
6. **Ստացիոնար՝ աչքի լազերային վիրաբուժություն**
   - Աչքի հիվանդությունների բուժման նորարարական լազերային տեխնոլոգիաների ներդրում,
   - Սարքավորումների մշտական արդիականացում,
   - Բարձր որակավորմամբ մասնագետների ներգրավում:
7. **Ստացիոնար՝ այլ ծառայություններ**
   - Տարբեր ոլորտներում պահանջվող նոր բժշկական ծառայությունների ավելացում,
   - Հիվանդների անհատականացված բուժման մոտեցման զարգացում:
   - Տարածքների վերանորոգում և արդիականացում:
8. **Բժշկական տուրիզմ:** Ընկերությունը կարևորում է բժշկական տուրիզմի զարգացումը Հայաստանում: Բժշկական տուրիզմը նախընտրող զբոսաշրջիկների կողմից հիմնականում պահանջված են էսթետիկ վիրաբուժության, ստոմատոլոգիական, օրթոպեդիկ, ուռուցքաբանական, գինեկոլոգիական, կանանց վերարտադրողական օրգանների խնդիրների լուծման հետ կապված բուժծառայությունները:
9. **Թվային ծառայությունների ներդրում**
   - Հաճախորդի օնլայն-սենյակի ներդրում, Վարդանանց հավելվածի գործարկում և կատարելագործում,
   - Հեռահար բժշկության (telehealth) ներդրում և ինտեգրում Վարդանանցի պրոցեսների մեջ,
   - Արհեստական բանականության ներդրում դիագնոստիկայի և բուժման մեջ,
   - Օնլայն լուծումների ներդրում հաճախորդների սպասարկման մեջ:

«Վարդանանց» ՆԲԿ-ի նպատակն է ապահովել ժամանակակից, հասանելի և հարմարավետ բժշկական ծառայություններ՝ համայնքի առողջությունը բարելավելու համար:

2.2 Հիմնական ռազմավարական ձեռքբերումները և զարգացումները 2025 թվականի ընթացքում և մինչև սույն հաշվետվության ամսաթիվն ընկած ժամանակահատվածում

1. Սկսած 2024 թվականի դեկտեմբերից մասնակի, իսկ արդեն 2025 թվականին իր ամբողջ ներուժով սկսեց գործել Վարդանանց ՆԲԿ նոր մասնաճյուղը Գայի պողոտա 10/7 հասցեում(«Նանսեն» մասնաճյուղ): Մասնաճյուղը ամբուլատոր ծառայություններին կից նաև մատուցում է ներհիվանդանոցային՝ ստացիոնար ծառայություններ և համարվում է այս դասի դեռևս միակ լիցենզավորված կլինիկան «Վարդանանց» ՆԲԿ-ի ցանցում: 2025 թվականին առաջին անգամ բժշկական կենտրոնում մեկնարկել են հիվանդանոցային ծառայությունների այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝

   - **Ընդհանուր վիրաբուժություն** — ուռուցքների, ճողվածքների և այլ հիվանդությունների արդյունավետ բուժում՝ անհատական մոտեցմամբ:
   - **Էնդոսկոպիկ վիրահատություններ** — նվազ ինվազիվ մեթոդով ընթացող միջամտություններ, որոնք նպաստում են արագ ապաքինմանը:
   - **Ուրոլոգիա** — միզուղիների և տղամարդու վերարտադրողական համակարգի հիվանդությունների բուժում:
   - **Օրթոպեդիկ վիրաբուժություն** — հենաշարժողական համակարգի խախտումների շտկում, ներառյալ՝ արթրոսկոպիա:
   - **Կորոնար և ծայրամասային զարկերակների ստենտավորում** — արյան հոսքի վերականգնում՝ նորագույն տեխնոլոգիաներով:
   - **Ստամոքսի փոքրացման կամ բարիատրիկ վիրահատություն**
2. «Քոչար» մասնաճյուղը դիրքավորվեց որպես Ընկերության համար կարևոր ռազմավարական ուղղություն հանդիսացող և ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող տարեկան կանխարգելիչ բուժզննումների ամբողջական շղթան մեկ վայրում և հաճախորդի համար արդյունավետ ժամկետներում իրականացնող մասնաճյուղ:
3. Ընկերությունը 2025 թվականի ընթացքում դարձավ Հայաստանի առողջապահական ոլորտի առաջին ընկերությունը, որի պարտատոմսերը 1 մլրդ ՀՀ դրամ ծավալով ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայում: Ցուցակվել են 20,000 պարտատոմսեր՝ յուրաքանչյուրը 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 12% արժեկտրոնային եկամտաբերությամբ (կիսամյակային վճարումով) և 36-ամսյա շրջանառության ժամկետով: Պարտատոմսերի թողարկման և բորսայում ցուցակման նպատակն է ներգրավել ֆինանսական միջոցներ նոր բժշկական ծառայությունների ներդրման, թվային տեխնոլոգիաների, մարդկային ռեսուրսի զարգացման և մասնաճյուղերի ցանցի ընդլայնման համար՝ շարունակելով ընկերության զարգացման ռազմավարությունը:
4. 2025 թվականի դեկտեմբերին «Ինթելլիջենթ Մենեջմենթ» հոլդինգը, որն իր մեջ համախմբում է այդ թվում Վարդանանց ՆԲԿ-ը, հայտարեց ենթակառուցվածքային նոր ծրագրի՝ «Վարդանանց-Քըրք Քըրքորյան» նորարարական բժշկության կենտրոնի

նախագծի մեկնարկի մասին: «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնի այս նոր ամբուլատոր-ստացիոնար մասնաճյուղը լինելու է ցանցի ֆլագման ստորաբաժանումը, որը Քըրք Քըրքորյան (նախկինում՝ Լենինգրադյան) և Մոնթե Մելքոնյան փողոցներն ընդգրկող թաղամասերում կլինի առաջին բազմապրոֆիլ բժշկական հաստատությունը: Այդ բժշկական կենտրոնը կլինի Վարդանանցի դեռևս ամենախոշոր կենտրոնը և նախատեսվում է, որ այն կսկսի իր աշխատանքները 2028 թ. առաջին կիսամյակում: 2025 թվականին այս նախագիծը ստացել է ՃՀԱ (նախագծման թույլտվություն), իսկ 2026 թ. 1-ին եռամսյակում ավարտվել են այդ տարածքում գտնվող շինությունների քանդման աշխատանքները: Ակնկալվում է, որ շինարարական աշխատանքները կսկսեն 2026 թ. աշնանը:

5. 2026 թվականի հունվարի 1-ից Ընկերությունը սկսեց ծառայությունների մատուցումը առողջության համապարփակ ապահովագրության շահառուներին: «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի շրջանակում Ընկերությունը բուժառուներին մատուցում է ծառայություններ հետևյալ ուղղություններով.
   - Ամբուլատոր բժշկական ծառայություններ,
   - Հիվանդանոցային բուժօգնություն:
6. 2026 թվականի փետրվարի 21-ին Հայաստանի ազգային պատկերասրահում «Վարդանանց» ՆԲԿ-ը հանրությանը ներկայացրեց «Բուժում է Վարդանանցը» կլինիկական գործելակարգերի եռահատոր ժողովածուն՝ նախատեսված բժիշկների, ուսանողների, ինչպես նաև՝ բուժառուների համար: Ժողովածուն ներառում է 371 բուժման գործելակարգ՝ 25 բժշկական մասնագիտացումներով, ներառյալ թերապևտիկ և վիրաբուժական ուղությունները: Գործելակարգերը մշակվել են՝ հաշվի առնելով 2025 թվականի տվյալներով միջազգային առաջատար ուղեցույցները՝ հարմարեցնելով Հայաստանի առողջապահական համակարգին: Միասնական գործելակարգերն ապահովում են ախտորոշման և բուժման միանման մոտեցում, ինչը բացառում է սուբյեկտիվ մեկնաբանությունները, որոնք հաճախ սխալ են լինում, կամ ունենում են բացթողումներ: Գործելակարգերը միաժամանակ «Վարդանանց» ՆԲԿ-ի ղեկավարության համար որակի հսկողության գործիք են: Իսկ բարձր որակի բժշկական ծառայությունների ապահովումը, ինչպես նաև բուժառուի իրազեկվածությունը, թափանցիկությունը և ընդունված որոշումների հիմնավորվածությունը, արդյունքում՝ բժշկի նկատմամբ վստահության բարձրացումը, Ընկերության զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն է:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում առնչվում է ստորև թվարկված ռիսկերին և անորոշություններին.

Կարգավորման ռիսկ. Առողջապահության ոլորտը Հայաստանում ենթարկվում է խիստ վերահսկողության: Ընկերությունը պարտավոր է համապատասխանել ազգային և տեղական

առողջապահական նորմերին, ներառյալ լիցենզավորման, գործառնական ստանդարտների և հիվանդների անվտանգության կանոնակարգերին: Այս կարգավորումների էական փոփոխությունները, լիցենզիաների ստացման կամ թարմացման ուշացումը, կամ դրանց անհամապատասխանությունը կարող է հանգեցնել տուգանքների, գործառնական սահմանափակումների կամ հեղինակության վնասի: Բացի այդ, միջազգային տվյալների պաշտպանության օրենքներին (օրինակ՝ GDPR) համապատասխանությունը դառնում է ավելի կարևոր: Տվյալների անվտանգության խախտումը կամ հիվանդների կոնֆիդենցիալ անձնական և բժշկական տեղեկատվության ոչ պատշաճ կառավարումը կարող է հանգեցնել ֆինանսական և իրավական հետևանքների: Ընկերությունը վստահորեն կառավարում է կարգավորման ռիսկը մասնագիտացված անձնակազմի շնորհիվ, թվային տեխնոլոգիաների կիրառման և կարգավորման առաջանցիկ սկզբունքների վաղ ներդրմամբ:

Մակրոտնտեսական ռիսկ. Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է երկրի մակրոտնտեսական իրավիճակի հետ: Տնտեսական անկայունության, արժույթի արժեզրկման կամ բարձր գնաճի ժամանակահատվածները կարող են նվազեցնել բնակչության գնողունակությունը, ինչը կարող է սահմանափակել Վարդանանց ՆԲԿ ծառայություններից օգտվող հիվանդների քանակը: Ընկերությունը կախված է նաև հաճախորդների և ապահովագրական ընկերությունների կողմից ժամանակին կատարվող վճարումներից: Վճարումների ուշացումը կամ չկատարումը կարող է հանգեցնել իրացվելիության խնդիրների, ինչը կազդի Ընկերության ամենօրյա գործառույթների ֆինանսավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և անձնակազմի վերապատրաստման տեմպերի վրա:

Մրցակցային ռիսկ. Հայաստանում ամբուլատոր բուժսպասարկման ոլորտը գնալով դառնում է ավելի մրցակցային: Նոր կլինիկաները, որոնք առաջարկում են մասնագիտացված կամ ավելի մատչելի ծառայություններ, կարող են նվազեցնել «Վարդանանց» ՆԲԿ-ի մասնաբաժինն այս շուկայում: Հատկապես միջազգային գործընկերներ ունեցող խոշոր կլինիկաները կարող են գրավել շուկայի զգալի մասը: Մրցունակությունը պահպանելու համար Ընկերությունը 2025 թվականին ևս շարունակական ներդրումներ է կատարել թվային և գործառնական տեխնոլոգիաների, անձնակազմի վերապատրաստման և հիվանդների խնամքի որակի բարելավման ուղղություններով:

Գործառնական ռիսկեր. Ընկերության հաջողությունը մեծապես կախված է բարձր գործառնական արդյունավետությունից և մատուցվող ծառայությունների որակից: Ներքին գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ Ընկերությունը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա՝ 2025 թվականի ընթացքում խուսափելով գործառնական ռիսկից էական կորուստներից:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ ռիսկերին և անորոշություններին դիմակայելու համար Ընկերությունն անընդմեջ իրականացնում է ռիսկերի մոնիթորինգներ, իր գործունեությունը սահմանում է սահմանված ռիսկի ախորժակի շրջանակներում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության կառավարման համակարգի զարգացումը ենթադրում է կառավարման բաց, մրցունակ, արդյունավետ համակարգի կատարելագործում, Ընկերության գործունեության համապատասխանեցում արտաքին միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին, առողջապահական համակարգում գնալով սրվող մրցակցությանը դիմակայում, որոշումների կայացման ճկունության աստիճանի և պատասխանատվության մակարդակի բարձրացում, որն ուղղված կլինի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների կատարելագործմանը, Ընկերության ներսում բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և միջազգային լավագույն փորձի համապատասխանեցմանը:

Ընկերությունում գործում է 5 անդամից բաղկացած տնօրենների խորհուրդ: Ընկերության բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Ընկերության հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղղուն, այն է՝ բժշկական կենտրոնի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման որակի բարձրացում, մասնաճյուղային ցանցի ընդլայնում, մատուցվող ծառայությունների որակի և քանակի մշտական ընդլայնում:

Արևիկ Մխիթարյան
Կառավարող տնօրեն

«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ»
"ARINTERLEV"
«АРИНТЕРЛЕВ»
02569999

Լուսինե Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2025թ. հազ.դրամ	2024թ. հազ.դրամ
Հասույթ	5,660,019	4,469,756
Ինքնարժեք	(4,250,486)	(3,194,426)
Համախառն շահույթ	**1,409,533**	**1,275,330**
Վարչական ծախսեր	(1,382,922)	(1,215,717)
Իրացման ծախսեր	(108,112)	(103,568)
Այլ եկամուտ	168,025	134,593
Այլ ծախսեր	(232,344)	(271,782)
Գործառնական վնաս	**(145,820)**	**(181,144)**
Ֆինանսական եկամուտ	29,062	50,607
Ֆինանսական ծախսեր	(483,983)	(330,955)
Փոխարժեքային տարբերություններից զուտ (վնաս)/օգուտ	(75,401)	46,940
Վնաս մինչև հարկումը	**(676,142)**	**(414,552)**
Շահութահարկի գծով վերականգնում	61,166	52,234
Տարվա զուտ վնաս	**(614,976)**	**(362,318)**
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք	**(614,976)**	**(362,318)**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2025թ. հազ.դրամ	2024թ. հազ.դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	2,824,874	2,919,792
Ոչ նյութական ակտիվներ	85,145	106,669
Հետաձգված հարկային ակտիվ	160,242	99,076
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	1,615,317	1,648,258
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով	23,870	8,758
	4,709,448	**4,782,553**
Ընթացիկ ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,767	24,516
Բանկային ավանդներ	428,413	-
Տրված փոխառություններ	4,220	1,850
Պաշարներ	131,448	129,704
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	444,075	412,588
	1,043,923	**568,658**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	**5,753,371**	**5,351,211**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	998,475	998,475
Կուտակված վնաս	(842,799)	(227,823)
Էրացուցիչ կապիտալ	54,150	54,150
Պահուստային կապիտալ	21,396	21,396
Ընդամենը սեփական կապիտալ	**231,222**	**846,198**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր	768,663	744,275
Վարձակալական պարտավորություններ	1,553,223	1,549,631
Հատուցումը վերադարձնելու պարտականություն	58,171	158,408
Թողարկված պարտատոմսեր	1,000,000	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	590	690
	3,380,647	**2,453,004**
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,015,808	954,160
Վարկեր	601,750	664,343
Վարձակալական պարտավորություններ	393,707	310,961
Հատուցումը վերադարձնելու պարտականություն	100,237	58,757
Այլ պարտավորություններ	-	63,788
Թողարկված պարտատոմսեր	30,000	-
	2,141,502	**2,052,009**
Ընդամենը պարտավորություններ	**5,522,149**	**4,505,013**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**5,753,371**	**5,351,211**

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2025թ. հազ.դրամ	2024թ. հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բժշկական ծառայությունների դիմաց ստացված դրամական միջոցներ	5,346,183	4,354,113
Դեղերի վաճառքից մուտքեր	281,229	340,899
Ստացված տոկոսներ	53,011	321
Այլ մուտքեր	64,568	41,866
	5,744,991	**4,737,199**
Դեղերի, նյութերի ձեռքբերման գծով վճարումներ	(741,629)	(575,606)
Ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(839,175)	(591,072)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,527,286)	(1,852,800)
Վճարված շահութահարկ	-	(5,254)
Վճարումներ այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	(854,718)	(715,203)
Անհատույց տրված ակտիվներ	(10,832)	(14,369)
Այլ ելքեր	(171,810)	(59,500)
	(5,145,450)	**(3,813,804)**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**599,541**	**923,395**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքի գծով մուտքեր	1,536	9,209
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(241,690)	(783,430)
Ավանդների մարում, զուտ	(402,075)	-
Փոխառությունների տրամադրում	(3,650)	(458)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(645,879)**	**(774,679)**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկերի ստացում	255,417	718,970
Վարկերի մարում	(760,576)	(426,082)
Վարձակալական պարտավորությունների մարումներ	(324,644)	(276,203)
Տոկոսների մարում	(54,090)	(78,764)
Փաստաթղթային ակրեդիտիվների մարումներ	-	(92,602)
Պարտատոմսերի թողարկումից ստացված վճարումներ	1,001,690	-
Պարտատոմսի արժեկտրոնի վճարումներ	(60,000)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**57,797**	**(154,681)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**11,459**	**(5,965)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(208)	220
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	24,516	30,261
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**35,767**	**24,516**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ Հազ. դրամ	Կուտակված շահույթ Հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ Հազ. դրամ	Պահուստային կապիտալ Հազ. դրամ	Ընդամենը Հազ. դրամ
31 դեկտեմբեր 2024թ.	998,475	(227,823)	54,150	21,396	846,198
Տարվա վնաս	-	(614,976)	-	-	(614,976)
31 դեկտեմբեր 2025թ.	998,475	(842,799)	54,150	21,396	231,222

	Կանոնադրական կապիտալ Հազ. դրամ	Կուտակված շահույթ Հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ Հազ. դրամ	Պահուստային կապիտալ Հազ. դրամ	Ընդամենը Հազ. դրամ
31 դեկտեմբեր 2023թ.	998,475	134,495	54,150	21,396	1,208,516
Տարվա վնաս	-	(362,318)	-	-	(362,318)
31 դեկտեմբեր 2024թ.	998,475	(227,823)	54,150	21,396	846,198

«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՓԲԸ (թողարկողի կոդ՝ 50057)

27.04.2026թ.

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. «Արինտերլև» ՓԲԸ (այսուհետ՝ «Թողարկող»), 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և ամբողջական և բոլոր էական առումներով համապատասխանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/04 պահանջներին:

2. Ներկայացված, աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան և բոլոր էական առումներով ճշգրիտ և ամբողջական արտացոլում են Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Թողարկողի սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում:

3. Կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Թողարկողը:

Արևիկ Մխիթարյան
Կառավարող տնօրեն

Լուսինե Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ